

11 - 12- ԲԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Տևողությունը՝ **120** րոպե:

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:

Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:

Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. Զորամրցումների ժամանակ որքա՞ն էր ցատկել Մենուա արքան իր Արծիբի նժույգով:

- 1) **11 մ 44 սմ**
- 2) 12 մ 16 սմ
- 3) 10 մ 10 սմ
- 4) 12 մ 15 սմ

2. Ըստ արձանագարության որքա՞ն էր անցել Արգիշտի Բ-ի արձակած նետը:

- 1) 500 մ
- 2) 400 մ
- 3) **492 մ**
- 4) 342 մ

3. Ո՞ր պատմիչն է, սպարապետ Մանվել Մամիկոնյանի օրինակով, առանձնացրել հայ զինվորականության վարքականոները:

- 1) Մովսես Խորենացին
- 2) **Փավստոս բուզանդը**
- 3) Եղիշեն
- 4) Ագաթանգեղոսը

4. Խոշարի (Հայոց Ձորի) ճակատամարտում Հայկ Նահապետը հակառակորդի բանակի ո՞ր մասն է ընտրում, որպես գլխավոր հարվածի ուղղություն:

- 1) Բաբելական 2-րդ բանակը
- 2) Բելի պահակախումբը
- 3) **Թշնամու մարտակարգի կենտրոնը**
- 4) Բաբելական բանակի ձախ թևը

5. տարբերանշանում զինվորական Ո՞ր կոչումն է:



- 1) Գեներալ գնդապետ
- 2) Գեներալ մայոր
- 3) **Բանակի գեներալ**
- 4) Զորքի Գեներալ

6. Ի՞նչ է գրոհը:

- 1) Գրոհը բարձր լարվածության կրակով ստորաբաժանումների արագընթաց և անդադար տեղաշարժն է հակառակորդի կրակային միջոցների ջախջախման նպատակով:
- 2) **Գրոհը բարձր լարվածության կրակով ստորաբաժանումների արագընթաց և անդադար տեղաշարժն է հակառակորդի կենդանի ուժի և կրակային միջոցների ջախջախման կամ գրավման նպատակով:**
- 3) Գրոհը հրաձգային կրակով ստորաբաժանումների արագընթաց և անդադար տեղաշարժն է:
- 4) Գրոհը բարձր լարվածության կրակով ստորաբաժանումների արագընթաց և անդադար տեղաշարժն է հակառակորդի կենդանի ուժի և ջախջախման կամ գրավման նպատակով:

7. Ե՞րբ է կազմավորվել 76-րդ հայկական լեռնահրաձգային դիվիզիան:

- 1) 1923 թ. օգոստոսի 5-ին
- 2) 1922 թ. սեպտեմբերի 21-ին
- 3) **1922 թ. սեպտեմբերի 5-ին**
- 4) 1941 թ. հոկտեմբերի 16-ին

8. Բարենպաստ պայմաններում, հետևակի շարքով տեղաշարժի դեպքում ձայնային ապաքողարկիչ նշանները ի՞նչ հեռավորության վրա են հայտնաբերվում:

- 1) 200 մ **2) 300 մ** 3) 250 մ 4) 150 մ

9. Որքա՞ն է մոտոհրաձգային ջոկի զբաղեցրած ճակատը հարձակման ժամանակ:

- 1) 100 մ 2) 80 մ 3) 60 մ **4) 50 մ**

10. Քանի՞ գրամ է կշռում ԱԿ 74 ինքնաձիգի փամփուշտը

- 1) 10.2** 2) 3.4 3) 12.2 4) 4.2

11. 6 մետրանոց հեռագրասյունը քանոնով չափելիս ստացվել է 9 մմ: Որքա՞ն է Ձեր կանգնած կետից մինչ հեռագրասյունը եղած հեռավորությունը:

- 1) 600 մ 2) 900 մ 3) 300 մ **4) 500 մ**

12. Հորիզոնում գտնվող մարդաստար վագոնի հետ ճկույթը համեմատելիս այն ամբողջությամբ ծածկում է վագոնը: Որքա՞ն է կազմում դիտակետից մինչև վագոնը եղած հեռավորությունը:

- 1) 250 մ **2) 200 մ** 3) 320 մ 4) 340 մ

13. Մարդու հասակը 1.62 մետր է: Այդ մարդու քայլի երկարությունը կկազմի՝

- 1) 0.77 մ** 2) 0.8 մ 3) 1 մ 4) 0.72 մ

14. ԿՁԱ ավտոմատի բոլոր տեսակի գնդակները (7.62 մմ) 500 մետր հեռավորության դեպքում՝ ի՞նչ խորությամբ կթափանցի ամուր տոփանած ձյունապատնեշին հարվածելիս:

- 1) 70-80 սմ** 2) 60-70 սմ 3) 70-75 սմ 4) 80-90 սմ

15. ԿԱ-74 ինքնաձիգի պողպատե միջուկով գնդակը (5.45 մմ) 350 մետր հեռավորության դեպքում՝ ի՞նչ խորությամբ կներթափանցի 5 մմ հաստությամբ զրահին հարվածելիս:

- 1) 40 % 2) 30 % 3) 45 % **4) 50 %**

16. Մարտական գործողության ժամանակ ջոկի հրամանատարը ստանում է այնպիսի վիրավորում, որը հանգեցնում է նրա մարտունակության կորստին: Ստեղծված իրավիճակում գնդացրորդը որոշում է փոխարինել հրամանատարին (հրամանատարը չէր նշել թե ով պետք է իրեն փոխարինի):

Ստեղծված պահին գնդացրորդը ճի՞շտ է վարվում, թե ո՞չ:

- 1) Այո՛, ճիշտ վարվեց: **2) Ո՛չ, սխալ վարվեց:**

17. Տեղագրական քարտեզի վրա ի՞նչ է ցույց տալիս նշված պայմանական նշանը



- 1) Ոգելից խմիչքների արտադրամաս 2) Էլեկտրակայան
3) Գործարաններ և ֆաբրիկաներ 4) Ճանապարհի բաժանում

18. Ձինվորը, ով գտնվում էր իր համար անձանոթ տեղանքում փորձեց քարտեզի և կողմնացույցի միջոցով որոշել իր շարժման ուղղությունը: Նա մագնիսական ազիմուտը գտնելու համար կողմնացույցը քարտեզի վրա տեղադրեց այնպես, որ կողմնացույցի կենտրոնը հմընկնի քարտեզի ուղղահայաց և հորիզոնական գծերի հատման կետին, իսկ զրոյական բաժանքը համապատասխանի մագնիսական սլաքի հյուսիսային ծայրի և քարտեզի կիլոմետրային ցանցի ուղղահայաց գծին:

Ձինվորը արդյոք ք ճիշտ է որոշել մագնիսական ազիմուտը:

- 1) Այո՛, ճիշտ է որոշել, որիետև քարտեզի վրա ճիշտ է տեղադրել կողմնացույցը
- 2) Ո՛չ, ճիշտ չի որոշել, որովհետև կողմնացույցի մագնիսացված սլաքը ճիշտ չի համապատասխանեցրել քարտեզի կիլոմետրային ցանցին
- 3) Այո՛, ճիշտ է որոշել, որովհետև կողմնացույցի մագնիսացված սլաքը ճիշտ է հարմարեցրել քարտեզի կիլոմետրային ցանցին
- 4) **Ո՛չ, ճիշտ չի որոշել, որովհետև կողմնացույցի կենտրոնը սխալ է հարմարեցրել քարտեզին:**

19. Ու՞մն են պատկանում հետևյալ խոսքերը. «Հայերը Ղարաքիլիսայի տակ ցույց տվեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»:

- 1) գեներալ Պասկևիչին
- 2) **մարշալ Վեհիբին**
- 3) գնդապետ Պերեկրեստովին
- 4) պորուչիկ Նժդեհին

20. Ինչպե՞ս է որոշվում նոնականետորդի տեղը ջոկում:

- 1) **Նոնականետորդի տեղը ջոկում որոշվում է հակառակորդի տանկերի շարժման հավանական ուղղություններից**
- 2) Նոնականետորդի տեղը ջոկում որոշվում է հակառակորդի զրահամեքենաների և կենդանի ուժի շարժման ուղղություններից
- 3) Նոնականետորդի տեղը ջոկում որոշվում է հակառակորդի ինքնաթիռների և հետևակի մարտական մեքենաների շարժման հավանական ուղղություններից
- 4) Նոնականետորդի տեղը ջոկում որոշվում է հակառակորդի տանկերի և ուղղաթիռների շարժման հավանական ուղղություններից